ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

0004, Երևան, Ծովակալ Իսակովի պող. 29 Հեռ. (010) 778-122

թիվ 96/7-165 «09» 02 2026 թ.

***Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության թիվ 063 մասնագիտական խորհրդի նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Ս. Ավետիսյանին***

*Հարգելի՛ պարոն Ավետիսյան*

Ուղարկվում է Անահիտ Արմանի Նալբանդյանի՝ «Նախադեպային իրավունքի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում» թեմայով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության կարծիքը:

Կից՝ կարծիքը՝ «6» թերթից (2 օրինակով) և ատենախոսությունը:

*Հարգանքով՝*

***Ռեկտորի պարտականությունների ժամանակավոր կատարող, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*** ***Մ. Մարկոսյան***

Կատարող՝ Ա. Սաֆարյան (093577589)

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորի
պարտականությունների ժամանակավոր
կատարող _____ Մ. Մ. Մարկոսյան
« 10 » 02 2026 թ.

**ԿԱՐԾԻՔ**

**Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝ Անահիտ Արմանի Նալբանդյանի՝ «Նախադեպային իրավունքի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում» թեմայով ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնը, մասնակցությամբ՝ իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Խառատյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Հ. Ա. Ստեփանյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Գևորգյանի և Ա. Գ. Սաֆարյանի քննարկեց Անահիտ Արմանի Նալբանդյանի՝ «Նախադեպային իրավունքի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում» թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն»

մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Ընդգծելով հետազոտվող թեմայի կարևորությունն՝ անհրաժեշտ է փաստել, որ դատական նախադեպն, առաջին հերթին, հուշում է սպասվող դատավարական ելքը (դատարանի տրամաբանությունը), քանի որ ենթադրվում է, որ դատարանը գործը հանգուցալուծելու է առկա նախադեպի շրջանակում, եթե, իհարկե, բացառիկ դեպքերում այդ նախադեպից շեղման հիմնավոր և համոզիչ փաստարկներ չեն ներկայացվում, այդ թվում՝ իրավունքի զարգացման, իրավաընկալման փոփոխման լույսի ներքո: Այս համատեքստում այն արդյունավետ միջոց է դատավարական կողմերի մարտավարությունը կառուցելու համար: Միաժամանակ դատական նախադեպը կոչված է լուծելու ոչ միայն օրենսդրական բացերը, այլ նաև, միասնականացնելու տարբեր դատարանների կողմից նույն իրավական նորմի վերաբերյալ տրված տարբեր մեկնաբանությունները, իրավական դիրքորոշումները:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ութ ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում թեմայի հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական հետազոտման և մշակվածության աստիճանը, տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, ինչպես նաև՝ պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձաքննությունը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Դատական նախադեպի և դատական պրակտիկայի տեղն ու դերը ազգային իրավական համակարգում. տեսության և մեթոդաբանության հիմնախնդիրներ» վերտառությամբ գլխում հեղինակը հանգամանալից ներկայացրել է դատական նախադեպի վերաբերյալ պատմական տարբեր ժամանակաշրջաններում մտածողների տեսակետները, բացահայտել

նախադեպին բնորոշ հատկանիշները, դատական նորմաստեղծման հայեցակարգն, անդրադարձել տարբեր հեղինակների դիտարկումներին, նախադեպային իրավունքի և դատական պրակտիկայի հետազոտության ժամանակակից գիտական և մեթոդաբանական մոտեցումներին, այդ թվում՝ իրավաբանական նորաբանություններին: Հեղինակը նաև քննարկել է դատական հայեցողության հասկացությունը, դրա էությունն ու դերը դատական նախադեպի ու դատական պրակտիկայի ձևավորման գործընթացում:

Ատենախոսության երկրորդ՝ «Դատական նախադեպի առանձնահատկությունները ընդհանուր իրավունքի և մայրցամաքային (ռոմանագերմանական) իրավական համակարգերում. իրավահամեմատական վերլուծություն» վերտառությամբ գլխում հեղինակը ներկայացրել է դատական նախադեպի առանձնահատկություններն ընդհանուր իրավունքի համակարգում, ըստ ժամանակաշրջանների քննարկել անգլիական իրավունքի համակարգի պատմական զարգացման հիմնական ուղենիշները, ներկայացրել անգլիական իրավունքի աղբյուրները, դրանց ներկա վիճակը, իրավացիորեն եզրահանգել, որ որոշ դեպքերում դատական պրակտիկայում ՄԻԵԴ որոշումների աղճատված, ձևական օգտագործման միտում կա (այսինքն՝ դատական ակտի մեջ հղում է տրվում ՄԻԵԴ որևէ որոշման, բայց իրականում այդ որոշումն այնքան էլ վերաբերելի չէ, կիրառելի չէ այդ իրավիճակում): Հաջորդիվ հեղինակն անդրադարձել է ռոմանագերմանական իրավական համակարգում նախադեպային իրավունքի տեղին ու դերին:

Ատենախոսության երրորդ՝ «Դատական իշխանության կողմից օրենքների և դատական պրակտիկայի կիրառման միասնականության ապահովման, օրենսդրական բացերի, անորոշությունների և հակասությունների հաղթահարման հիմնախնդիրներն ազգային իրավունքի համակարգում» վերտառությամբ գլխում հեղինակը ներկայացրել և վերլուծել է Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի կողմից օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառման և դատական պրակտիկայի միասնականության ապահովման հիմնախնդիրը տեսական և գործնական առումներով, ինչպես նաև դատական

պրակտիկայի դերն ազգային իրավունքի համակարգում օրենսդրական բացերի, անորոշությունների և իրավական հակասությունների հաղթահարման գործընթացում:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումները:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Աշխատանքի ներածություն բաժնի «հետազոտության գիտական նորույթ» ենթաբաժնում հեղինակը դատահիրավական բարեփոխումների համատեքստում առաջարկել է դատական նախադեպերը բաժանել երեք հիմնական խմբերի՝ պարտադիր, պայմանականորեն պարտադիր, ուղեցուցային: Սակայն անհրաժեշտ է նշել, որ հետազոտական աշխատանքում հեղինակը չի մեկնաբանել, թե ինչպե՞ս, ի՞նչ եղանակով կամ մեթոդով պետք է ընկալել ու տարբերակել նախադեպի վերոնշյալ խմբերը:

2. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող առաջին դրույթն, որի շրջանակներում հեղինակը ներկայացրել է բարձր դատարանների կողմից ձևավորված իրավական դիրքորոշումների և իրավակարգավորումների նշանակությունը: Հարկ է նկատել, որ թվարկած հետազոտության արդյունքներն ընդհանուր բնույթի տեսական դիտարկումներ են, ուստի, չթերագնահատելով ատենախոսի կողմից իրականացված հետազոտության արժեքը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ վերոհիշյալ մոտեցումը չի պարունակում գիտական նորույթի էական տարրեր և կարող էր ներառվել ատենախոսության «Եզրակացություն» բաժնում:

3. Հետազոտության պաշտպանության ներկայացվող երրորդ դրույթի շրջանակներում հեղինակը, թվարկելով որոշակի կարգավորումներ, նշում է, որ նորմատիվ իրավական ակտն իրավունքի հիմնական աղբյուր է, սակայն միայն օրինաստեղծ գործունեությամբ օբյեկտիվորեն անհնար է որոշել բոլոր իրավական լուծումներ պահանջող հարցերի պատասխաններն, ինչն արդյունավետ է միայն դատական ակտերը (իրավական դիրքորոշումներ, նախադեպեր, դատական պրակտիկա) իրավունքի լեգիտիմ աղբյուրներ ճանաչելու միջոցով: Ըստ էության,

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի շրջանակներում որպես իրավունքի աղբյուրներ արդեն իսկ լայն կիրառում ունեն և նորմատիվ իրավական ակտը, և դատական նախադեպը: Մեր կարծիքով, աշխատանքը կշահեր, եթե հեղինակի ընդհանրական առաջարկությունը շարադրվեր կոնկրետ ձևակերպմամբ՝ մասնավորեցնելով օրինաստեղծ գործունեության համար գաղափարական և իրավական հիմք հանդիսացող դատական ակտերի շրջանակը:

4. Ատենախոսության տարբեր էջերում մասամբ բացակայում են հղումների վերաբերյալ պատշաճ գրառումները՝ նշված չեն վկայակոչված աղբյուրի կոնկրետ էջը կամ էջերը, օրինակ՝ էջ 26՝ հղումներ 38, 39, էջ 29՝ հղումներ 42, 43, էջ 31՝ հղում 48, էջ 40՝ հղում 64, էջ 43՝ հղում 74, էջ 46՝ հղումներ 79, 80, 81, էջ 64՝ հղումներ 104, 105, էջ 90՝ հղում 138, էջ 91՝ հղումներ 140, 142:

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ:

**Հետևություն.** Անահիտ Արմանի Նալբանդյանի՝ «Նախադեպային իրավունքի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգը և չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին իսկ հեղինակը՝ Անահիտ Արմանի Նալբանդյանը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Անահիտ Արմանի Նալբանդյանի՝ «Նախադեպային իրավունքի զարգացման հեռանկարները Հայաստանի

Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում» խորագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի պետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի 2026 թ. փետրվարի 6-ի նիստում, արձանագրություն թիվ 10:

Ամբիոնի պետ՝ _____ Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պրոռեկտոր՝ _____ Ա. Է. Սուքիասյան